Գրիգոր Լուսաւորչի գործունէութիւնը սկըսւում է 287 թուից եւ միայն Դ. դարի սկզբում քրիստոնէութիւնը պետական կրօն հրատարակւում Տրդատ մեծի ձեռքով:

Բայց Հայաստանից էլ աւելի վաղ քրիստոնէութիւնը պետական կրօն էր դարձած կարճ ժամանակի համար հարեւան Օսրոյենի ասորական փոքրիկ պետութեան մէջ, Աբգար Թ.-ի ժամանակ (179–216), Եդեսիա մայրաքաղաքով: Քրիստոնէութեան տարածման շատ նպաստաւոր պիտի լինէր նաեւ Պալմիրայի պետութեան շրջանը Գ. դարի երկրորդ կիսում Զենոբիա թագուհու ժամանակ: Ասորական քրիստոնէութեան մի երրորդ մեծ կեդրոն էր Մծբինը 325 թուից առաջ. բաւական է յիշել, թէ Եփրեմ Ասորին ծնուել է այդ քաղաքում քրիստոնեայ ծնողներից Դ. դարի սկզբում. նշանակում է Գ. դարում արդէն այնտեղ քրիստոնէութիւն կար: Ի նկատի պէտք է ունենալ նաեւ Յակոբ Մծբնայ հայրապետի ազգակցական կապը մեր Լուսաւորչի հետ աւանդաբար, որ յայտնի մատենագիր էր եւ որի գործերը թարգմանուած են հայերէն, ինչպէս եւ Եփրեմինը:

Քրիստոնէութիւնը տարածուած էր նաեւ Միջագետքում եւ Պարսկաստանում մինչեւ Պարթեւական երկիրները, ուր բազմաթիւ համայնքներ կային ասորական քարոզութեամբ. ըստ Նեօլդէկէի Դ. դարի կէսերում արդէն շատ տարածուած էր քրիստոնէութիւնը Տիգրիսի երկիրներում, կազմակերպուած եպիսկոպոսութեամբ եւ հոգեւորականութեամբ. 310 թ. Սելեւկիայի եւ Տիզբոնի եպիսկոպոսն էր Սիմէոն Բար Զարոան, իսկ նորանից առաջ Բարա Ակկայի, որ փորձել էր իւր գաւազանի տակ միացնել Պարսկաստանի բոլոր եպիսկոպոսութիւնները, բայց անյաջող:* Պարսկաստանում հալածանք է սկսում միայն Շապուհ Բ.-ի ժամանակ, իսկ մինչ այդ անարգելք զարգանում էր այնտեղ քրիստոնէութիւնը: Ե. դարում Տիզբոնում ասորական պատրիարքներ էին Եահբալահա (415–420) եւ Դադիշայ (421–456):

*Neoldeke. Die Aufsätze. I. Labourt. Le Christianism dans l'empire Perse. Paris. 1904.

Այստեղ յիշատակելի է Հայաստանի հարեւան երկիրներից Կապադովկիան իւր Կեսարիա մայրաքաղաքով, ուր քրիստոնէութիւնը մուտք է գործում դեռ եւս առաջին դարում. Բ. դարի վերջում այնտեղ կատարուած հալածանքների մասին տեղեակ է Կարքեդոնի նշանաւոր երէց Տերտուղիանը: Գ. դարի առաջին կիսում այնտեղ գործել են Աղէքսանդր եւ Ֆիրմիլիանոս եպիսկոպոսները (233–ին եպս.), առաջինը իւր կեանքի վերջին օրերում Երուսաղէմի քրիստոնէական մատենադարանի հիմնադիրը դարձաւ, եւ երկրորդը թղթակցութեան մէջ էր իւր ժամանակի բոլոր նշանաւոր եպիսկոպոսների հետ, ի միջի այլոց, եւ Կարքեդոնի Կիպրիանոսի: Սրանից ժամանակ է ստեղծւում Կեսարիայի աստուածաբանութեան դպրոցը, որի հզօր ներկայացուցիչներն են ապա Դ. դարում՝ իրար յետեւից՝ Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Աստուածաբանն ու Գրիգոր Նիւսացին, որոնց երկերը թարգմանուեցան Ե. դարում հայերէն:

Յիշատակելի է Հայաստանի սահմանակից Պոնտոսում Գրիգոր Սքանչելագործի առաքելութիւնը (240 թ. եպս.), որի գործունէութիւնը օրինակ հանդիսացաւ մեր Գրիգոր Լուսաւորչի համար:

Ի վերջոյ պէտք է ուշադրութեան առնել մի հանգամանք եւս, մեր Դ. դարում սկըսուած եւ Ե. դարում ուռճացած հոգեւորքաղաքակրթական եւ դորա հետ ճարտարապետական մեծ շարժումը հասկանալու համար: Գ. դարի վերջերից երեւան եկած եւ Դ. դարում զօրացած հոսանքը հայ ուսանողութեան դէպի ասորական եւ յունական բարձր դպրոցները մի նշան էր, թէ հայ ժողովուրդը քաղաքակրթութեան ասպարիզում բոլորովին համբակ չէր: Բաւական է յիշել Պրոյերեսիոսի անուան հետ կապուած տեղեկութիւնները իբրեւ ուսանող Անտիոքում, աշակերտելով Ուլպիանոսի եւ ապա իբրեւ առաջնակարգ հռետոր եւ փիլիսոփայ, գիտնական դասախօս Աթէնքում եւ Հռոմում. այստեղ քաղաքի հասցէին արտասանած իւր ներբողով այնպիսի հռչակ ստացաւ, որ նորան արձանը կանգնեցին Regina rerum Roma regi eloguentiae արձանագրու-